ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2014թ. թիվ 147-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ
ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 31.01.2014թ. թիվ 24-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. 2014 թվականի հունիսի 25-ին Լոռու մարզում իմ ղեկավարությամբ անցկացնել հրամանատարաշտաբային ուսումնավարժություն «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և իրականացում» թեմայով:

2. Ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով հաստատել՝

1) ուսումնավարժության ղեկավար կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի.

2) ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) միջնորդական խմբի կազմը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

3. ՈՒսումնավարժությունում ներգրավել.

1) Լոռու մարզպետարանի աշխատակազմը,

2) մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովը,

3) մարզի տարահանման հանձնաժողովը,

4) Լոռու մարզային փրկարարական վարչությունը,

5) մարզի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի հիմնարկները,

6) ՀՀ ԱԻՆ «ՍՊԱԾ» ՊՈԱԿ-ի «Վանաձոր» համալիր կայանը,

7) ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի Լոռու մարզային ծառայությունը,

8) ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչության Լոռու մարզային կենտրոնը,

9) Վանաձոր համայնքը,

10) Սպիտակ համայնքը,

11) Ստեփանավան համայնքը,

12) Ալավերդի համայնքը,

13) Տաշիր համայնքը,

14) Մեծ Պարնի համայնքը,

15) Շիրակամուտ համայնքը,

16) մարզի զանգվածային լրատվության միջոցները,

17) Վանաձորի տարածքային զինկոմիսարիատի ներկայացուցիչը,

18) ՀՀ ՊՆ թիվ 3 ԲԿ-ի ներկայացուցիչը,

19) ուսումնավարժությունում ներգրավված կազմակերպությունների արձագանքող ուժերը:

4. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Հ. Անտոնյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև ս/թ մայիսի 30-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց նախապատրաստումը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների հետ ուսումնավարժության անցկացման հարցերում (ազդարարում, տարահանում և այլն).

4) ճշգրտել «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ը.

5) ճշգրտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

6) համայնքների ղեկավարների հետ ուսումնասիրել հավանական իրավիճակը, բնակչության պաշտպանությանն ու կենսաապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգը.

7) ճշգրտել փոխգործողությունների պլանները.

8) ուսումնավարժության նախապատրաստման ընթացքում մարզային լրատվամիջոցներով բնակչությանը տեղեկացնել ուսումնավարժության բնույթի մասին.

9) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2014թ. հունիսի 12-ին:

5. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ Ա. Դարբինյանին՝

1) վերանայել և ճշգրտել մարզի արտակարգ իրավիճակների հանձնաժողովի անդամների խնդիրները, գործառույթներն ու իրավունքները.

2) ապահովել գործնական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով.

3) նախապատրաստել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկը և մինչև 2014թ. մայիսի 20-ը ներկայացնել հաստատման:

6. Ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները, համալրել անձնակազմը համապատասխան գույքով և հանդերձանքով.

2) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին.

3) գործնական միջոցառումների իրականացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

4) «ԱրմենՏել» ՓԲԸ ՀՏԿ-ի պետ Ս. Թորոսյանին՝ պատրաստ վիճակի բերել կապի և ազդարարման միջոցները: Ապահովել կայուն և անխափան կապ մասնակից մարմինների, ծառայությունների ու արձագանքող ուժերի հետ: Կառավարման կետերն ապահովել կապի և ազդարարման տեխնիկական ու շարժական միջոցներով.

5) մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝

ա. պատրաստ վիճակի բերել համապատասխան տրանսպորտային միջոցները՝ արձագանքող ուժերին դեպքի վայր տեղափոխելու և տարահանվողներին տարահանելու նպատակով.

բ. նախապատրաստել մարզային և ընդգրկվող համայնքների կառավարման կետերը, պատրաստ վիճակի բերել ծառայության արձագանքող ուժերը՝ արտակարգ իրավիճակներում գործելու համար.

6) մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս. Լամբարյանին՝

Ճշգրտել ծառայության խնդիրներն ու լուծման կարգը: Պատրաստության բերել մարզի բուժհիմնարկները՝ արտակարգ իրավիճակներում դրանք ծավալելու համար.

7) մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ. Հակոբյանին՝

Ստուգել անասնաբուժական հիմնարկությունների պատրաստությունը կենդանիների պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացման համար: Ստուգել դիտարկման ցանցի և լաբորատոր հսկողության հիմնարկների պատրաստականությունը.

8) մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ս.Հովհաննիսյանին՝

Ճշտել ծառայության ուժերի պատրաստականությունը, տարահանված բնակչությանը սննդով, իսկ արձագանքող ուժերին, անհրաժեշտության դեպքում, ՎՔՆ-ով և սննդով ապահովելու համար.

9) ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Ա. Կարապետյանին՝

Ճշտել ծառայության պատրաստականությունը ԱԻ-ում գործելու դեպքում և բնակավայրերից բնակչության տարահանման երթուղիներն ու տեղաբաշխման վայրերը.

10) «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի տնօրեն Հ. Անտոնյանին՝

Ճշգրտել վթարավերականգնողական խմբերի կազմը և նրանց ապահովվածությունը հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

11) «ՀԷՑ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի տնօրեն Գ. Սարգսյանին՝

Ստուգել ծառայության վթարատեխնիկական խմբերի անձնակազմերի հագեցվածությունը հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

12) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ Լոռու ԳԳՄ-ի տնօրեն Վ. Բաղդասարյանին՝

Ստուգել ծառայության վթարատեխնիկական խմբերի անձնակազմերի հագեցվածությունը հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով.

13) մարզային տարահանման հանձնաժողովի նախագահ Վ. Ասատրյանին՝

ա. ճշգրտել և համալրել հանձնաժողովի կազմը, ուսումնասիրել պաշտոնատար անձանց խնդիրներն ու պարտականությունները.

բ. ուսումնավարժությունում ընդգրկված համայնքների տարահանման հանձնաժողովների նախագահների հետ համատեղ ճշտել վտանգավոր տարածքներից բնակչության տարահանման պլաններն ու հաշվարկները: Լոռու մարզային փրկարարական վարչության պետի, շահագրգիռ ծառայությունների և համայնքապետերի հետ համատեղ ճշգրտել և որոշակիացնել տարահանման տրանսպորտային ապահովման և տարահանվող բնակչության տեղաբաշխման ու կենսաապահովման հարցերը:

14) Համայնքների ղեկավարներին՝

ա. լրամշակել և ճշգրտել «Համայնքի ԱԻ առաջացման դեպքում ստեղծվող իրավիճակի և դրա սպառնալիքի դեպքում կամ հետևանքների վերացման ժամանակ գործողությունների պլանը» և դրա իրականացման մեխանիզմը.

բ. Արձագանքող ուժերը բերել պատրաստ վիճակի:

7. Սույն որոշումը տրամադրել ուսումնավարժության մասնակիցներին:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. ապրիլի 18
ք.Վանաձոր